ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. (0253) 6-16-62,
Վեբ-կայք: http://www.odzun.am , Skype: odzun.lori, էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

թիվ 392-16
07 նոյեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու կողմից 2016 թվականի նոյեմբերի 7-ին կայացված արտահերթ նիստի ընթացքում ընդունված որոշումները (N 47-ից N 51 որոշումները):

Առդիր՝ 19 թերթ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Վ. Ձավարյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2016 թվական, N 47-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի վեցերորդ պարբերության, 12-րդ, 12[1] և 14-րդ հոդվածների՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 7-ի տասներկուերորդ արտահերթ նիստի օրակարգը.

1) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 17-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) «ՕՁՈՒՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

4) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱՐԾՐՈՒՆ ԴԱՎԹՅԱՆԻ, ԱՐՏԱՇԵՍ ՏԻՏԱՆՅԱՆԻ, ՌՈՄԻԿ ՃԱՐՈՅԱՆԻ ԵՎ ՎԱՉԵ ՉՈԲԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (8) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., նոյեմբերի 7
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2016 թվական, N 48-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, 37-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի, 46-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի համայնքային սեփականության 2016 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (8) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., նոյեմբերի 7
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2016 թվական, N 49-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 17-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի, ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի առաջին մասի, երկրորդ մասի երրորդ կետի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2015 թվականի մայիսի 27-ի ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ,, N 17-Ա որոշման մեջ.

Օձուն համայնքի 2016 թվականի բնապահպանական ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (8) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

/ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., նոյեմբերի 7
Գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 7-ի N 49-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ՕՁՈՒՆ

ՀԱՅՏ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 05.06.01 (ՍՆՈՒՆԴ, ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ, ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ 2-ՐԴ, 3-ՐԴ, 8-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ)

2016թ. Լոռու մարզ գ. Օձուն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի նկարագրությունը 3
Ծրագրի ընդհանուր նպատակը 3
Ծրագրի հիմնավորումը 4
Հավելված 1 6
Հավելված 2 7

Համայնքի նկարագրությունը

Օձուն համայնքը հանրապետության խոշոր և հնագույն բնակավայրերից է: Գտնվում է Երևանից 170 կմ, մարզկենտրոնից 50 կմ հեռավորության վրա՝ ՀՀ հյուսիսային մասում: Համայնքի մակերեսը 7879 հա է: Համայնքը գտնվում է Լոռու մարզի վարչական տարածքի մեջ: Օձուն համայնքի վարչական տարածքի մեջ է մտնում Ամոջ գյուղը: Օձունն աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ. IV դարում կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին, V դարում կառուցված Ծիրանավոր Ծաղկավանք, VII դարում կառուցված Հոռոմայրի վանական համալիրը, ինչպես նաև գյուղի տարբեր վայրերում կառուցված և տեղադրված բազմաթիվ խաչքարեր և մատուռներ վկայում են այդ մասին:

Օձունն աչքի է ընկնում նաև բարենպաստ մեղմ կլիմայով, որը պայմանավորված է նրա տարածքի մակերևույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ՝ 1000 – 1100 մ ծովի մակարդակից:

Օձուն համայնքի բնակչության թիվը 5316 մարդ է: Բնակչության մեծ մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Օձուն համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 5404 հա, որից վարելահող՝ 1295 հա, խոտհարք՝ 339 հա, արոտավայր՝ 3012 հա, այլ հաղատեսակներ՝ 757 հա: Օձուն համայնքում հաշվառված են 1450 գյուղացիական տնտեսություններ, որոնց սեփականաշնորհվել է 1110 հա վարելահող, 233 հա խոտհարք: Գյուղացիական տնտեսությունները մշակում են ցորեն, կարտոֆիլ, եգիպտացորեն:

Գյուղի ասֆալտապատ ճանապարհների տեսակարար կշիռը մոտ 10% է, գազաֆիկացված տների տեսակարար կշիռը 90 %, խմելու ջուր ունեցող տները 95%, հեռախոսակապ ունեցող ընտանիքների տեսակարար կշիռը 55%, ընդանուր հողատեսքերի 40 %-ը ոռոգվում են: Գյուղում հայտնաբերված չեն օգտակար հանածոներ: Գործում են ինը մանր արտադրական ձեռնարկություններ, երկու հացի փուռ, յոթ քարի արտադրամաս: Ծառայություններից գործում են Հայփոստի, էլցանցի, Հայռուսգազարդի Օձունի տեղամասերը, կա մեկ հանգստյան տուն, կան երեսուն խանութ-կրպակներ: Համայնքային ենթակայության տակ կա գործող երկու մանկապարտեզ, մեկ արվեստի դպրոց, մեկ մշակույթի տուն, երկու գրադարան, մեկ բուժամբուլատորիա, իսկ պետական սեփականություն հանդիսացող՝ երկու միջնակարգ դպրոց: Գյուղում գործում է «Լոռու ջրանցք» ՋՕԸ (ջրօգտագործողների ընկերություն): Մոտ հարյուր օձունցիներ աշխատում են «Արմենիա Քափր Փրոգրամ»՝ և Թեղուտ ՓԲ ընկերություններում: Չորս տասնյակից ավելի օձունցիներ աշխատում են Ալավերդիում գործող այլ հիմնարկ-ձեռնարկություններում ու բանկերում: Օձունցիների մի մասը գարնանը մեկնում է արտագնա աշխատանքի և վերադառնում աշնան վերջերին:

Ծրագրի ընդհանուր նպատակը

Ծրագիրը նպատակ է հետապնդում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեից սուբվենցիաների տեսքով Օձուն համայնքին կատարվող մասհանումների գումարները օգտագործել նպատակային և որոշակի չափով լուծել համայնքի բնապահպանական և առողջապահական խնդիրները:

Ծրագիրը ներառում է.

1.Համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ, որի անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես «Արմենիա Քափր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործունեությամբ:

2. Օձուն համայնքի բնապահպանական և շրջակա միջավայրի պահպանման ու վերականգնման միջոցառումներ

Ծրագրի հիմնավորումը

Օձուն համայնքի անտառային, ջրային և օդային ավազանների վրա Ալավերդու պղնձաձուլական գործարանի բնապահպանական ազդեցությունը արտահայտվում է մի քանի ուղղություններով, ինչպիսիք են՝ օդային ավազան ծծումբ պարունակող գազերի և փոշու արտանետումները և տարբեր արտադրամասերից վտանգավոր նյութերի արտահոսքը, որոնք, հատկապես խոնավ օրերին, տեղաշարժվում են դեպի Օձունի հարթավայր և ամպի տեսքով մնում երկար ժամանակ՝ առաջին հերթին վնաս հասցնելով մատաղ սերնդի առողջությանը և բնականոն աճին: Ուստի, Օձուն համայնքի բնապահպանական և շրջակա միջավայրի ու բնակչության առողջության պահպանման ու վերականգնման միջոցառումները դառնում են խիստ հրատապ:

1.Օձունի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքները սկսվել են անցյալ դարի 60-ական թվականներից: Մինչև 1990 թվականը ասֆալտապատ փողոցների ընդհանուր երկարությունը կազմել է 22կմ, այսինքն՝ փողոցների ընդհանուր երկարության 60-70%-ը: Մինչև 2010թ-ը գյուղում ասֆալտապատման աշխատանքներ չեն իրականացվել: 2011-2015թթ կատարվել են մոտ 2կմ երկարությամբ ասֆալտապատման աշխատանքներ:

2016թ բնապահպանական ծրագրով նախատեսվող ասֆալտապատման ենթակա թիվ 2, 3, 8 փողոցները թիվ 2 դպրոց և թիվ 1 մանկապարտեզ տանող ճանապարհներն են, որոնք , հատկապես անձրևոտ օրերին, խոչընդոտներն են առաջացնում և հետիոտների և տրանսպորտային միջոցների համար: Տարեցտարի նշված փողոցների վիճակը վատթարանում է:

2. Օձուն համայնքում գործում են 2 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, որտեղ հաճախում են 150-ից ավելի մանուկներ: Նախակրթարանների խաղասենյակները, հանգստի սենյակները և սանհանգույցները 2010թ.-ին վերանորոգվել են գյուղապետարանի միջոցներով, 2011թ.-ին բնապահպանական ծրագրով տեղադրվել են լոկալ ջեռուցման համակարգեր: 2012-2015թթ կատարվել են ընթացիկ և կոսմետիկ նորոգման աշխատանքներ, ձեռք է բերվել գույք, տեխնիկա, խոհանոցային սպասք:

Նախորդ տարիներին համայնքապետարանի կողմից իրականացված համալիր ծրագրերի արդյունքում նախակրթարաններ հաճախողների թիվը 90-ից հասել է 150 երեխայի, ինչը համայնքում ստացել է դրական արձագանք: Արդյունքում ավելի շատ թվով անապահով ընտանիքների երեխաներ են կարողանում հաճախել մանկապարտեզ, որոնք ապահովված են էկոլոգիապես մաքուր և որակյալ սննդով: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսում ենք համայնքի 2 նախակրթարաններին՝ շուրջ 150 սաներին ապահովել հավելյալ սննդով: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 5776800 դրամ:

Նախակրթարանների սաների առողջության ամրապնդման և ֆիզիկական պատրաստվածության բարելավման համար անհրաժեշտ է ձեռք բերել նաև անկողնային պարագաներ և մարզական գույք, որի համար անհրաժեշտ ՝ 2141400դրամ:

ՍՆՈՒՆԴ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

N	Մննդատեսակի անվանումը	Չափի միավոր	Մեկ տարվա քանակը	Գինը դրամ	Գումար
1	Աղ	կգ	100	200	20000
2	Բուսական յուղ /ձեթ/	լ	130	680	88400
3	Բազուկ /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	120	170	20400
4	Բազուկ /հունվարի 1-ից հունիսի 1-ը/	կգ	80	300	24000
5	Գազար /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	300	170	51000
6	Գազար /հունվարի 1-ից հունիսի 1-ը/	կգ	40	300	12000
7	Դդմիկ	կգ	60	130	7800
8	Թխվածքաբլիթ	կգ	200	1000	200000
9	Կաթնաշոր	կգ	80	2000	160000
10	Թթվասեր	կգ	200	1350	270000
11	Լոլիկ/հունիս-հոկտեմբեր/	կգ	400	170	68000
12	Խնձոր	կգ	800	250	200000
13	Ջեմ տեղական	կգ	120	1700	204000
14	Կոնֆետեղեն	կգ	150	1750	262500
15	Կարագ	կգ	150	2700	405000
16	Կարտոֆիլ / հունվարի 1-ից հունիսի 1/	կգ	150	250	37500
17	Կարտոֆիլ /հունիսի 1-ից հունվարի 1ը/	կգ	2900	150	435000
18	Կաղամբ /հունիսի 1-ից հունվարի 1-ը/	կգ	500	100	50000
19	Կաղամբ /հունվարի 1-ից հունիսի 1-ը/	կգ	200	180	36000
20	Հավի միս	կգ	200	1550	310000
21	Հավի ձու	հատ	3000	60	180000
22	Մակարոնեղեն	կգ	240	380	91200
23	Մածուն	կգ	300	650	195000
24	Շաքարավազ	կգ	300	360	108000
25	հաճարաձավար	կգ	60	450	27000
26	Բրինձ	կգ	120	550	66000
27	Սպիտակաձավար	կգ	40	550	22000
28	Հնդկաձավար	կգ	150	600	90000
29	Ոսպ	կգ	120	700	84000
30	Պանիր	կգ	90	1700	153000
31	Սմբուկ	կգ	100	130	13000
32	Չամիչ	կգ	5	1700	8500
33	Սոխ	կգ	100	250	25000
34	Վարունգ/հունիս-հոկտեմբեր/	կգ	500	150	75000
35	Տավարի միս փափուկ	կգ	200	2800	560000
36	Տավարի միս ոսկրոտ	կգ	100	2200	220000
37	Տաքդեղ /պղպեղ հունիս-հոկտեմբեր/	կգ	50	250	12500
38	Տոմատի մածուկ	կգ	25	1000	25000
39	հաց	կգ	2400	400	960000
	ԸՆԴԱՄԵՆԸ				5776800

Հավելված N1

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր - N:1
ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

	ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿ	Համայնքի փողոցների ասֆալտապատում:	Համայնքի ասֆալտապատ փողոցների մակարդակի բարելավում:
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ	Օձուն համայնքի 2-րդ, 3-րդ, 8-րդ փողոցներում կկատարվեն ասֆալտապատման աշխատանքներ: Կբարձրանա բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը:	Համայնքի 2-րդ փողոցի 640գծմ, 3-րդ փողոցի 190.7գծմ, 8-րդ փողոցի 200.5 գծմ հատվածների հիմնանորոգում (լայն. 4.5մ):
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵ-ՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Օձուն համայնքի 2-րդ,3-րդ, 8-րդ փողոցներում ասֆալտապատման աշխատանքներ: /Նախահաշվային արժեքը 40 000 հազ. դրամ/: Շինարարական աշխատանքների տևողությունը՝ 3 ամիս:	Համայնքի 2-րդ,3-րդ, 8-րդ փողոցումներում հիմնանորոգման աշխատանքների իրականացում: Շահագործման հանձնումը սեպտեմբեր ամսին:

Հավելված N2

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Ծ Ր Ա Գ Ի Ր - N:2

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐԻՆ ՍՆՆԴՈՎ,ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՎ և ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՒՅՔՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

	ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿ	Համայնքի բնակչության, հատկապես երեխաների առողջության պահպանման և ամրապնդման ապահովում	Համայնքի երեխաների առողջության, բնականոն աճի ապահովում
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	Երեխաների առողջության պահպանման և ամրապնդման ապահովում	Համայնքի 2 մանկապարտեզների շուրջ 150 սաների առողջության ամրապնդման ապահովում
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵ-ՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Ծրագրով նախատեսվում է համայնքի մանկապարտեզներին հատկացնել հավելյալ սնունդ, անկողնային պարագաներ և մարզական գույք (նախահաշվային արժեքը 7 918 200դրամ): Տևողությունը 12 ամիս:	Համայնքի 150 երեխաների առողջության պահպանման և ամրապնդման միջոցառումների իրականացում 2016 թվականի ընթացքում և հետագա տարիներին:

Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիտանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2016 թվական, N 50-Ա

«ՕՁՈՒՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանիի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 50-61-րդ և 62-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ, 15-րդ և 26-րդ կետերի, 52-րդ հոդվածի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-13-րդ,հոդվածների, 15-17-րդ հոդվածների և 23-25-րդ հոդվածների, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը և նրա կողմից ներկայացված իրավական ակտի (իրավաբանական անձի հիմնադրման մասին որոշման և կանոնադրության) նախագիծը, համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքն իրականացնելու, համայնքի սեփականություն համարվող բնակելի և ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, դրանց նորոգումն իրականացնելու, համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործումն իրականացնելու, համայնքի բնակավայրերի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներն իրականացնելու, համայնքում աղբահանություն և սանիտարական մաքրում, ինչպես նաև սանիտարական մաքրման կայանքների շինարարություն և շահագործում իրականացնելու, համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքներն իրականացնելու, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով համատիրությունների հիմնադիր ժողովների և դրանց անցկացման աշխատանքների ինչպես նաև օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքերի կառավարման այլ մարմինների ձևավորման նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու և համայնքի մասնակցությամբ այդ շենքերը սպասարկելու՝ համայնքի սեփականությունը համարվող բնակարանների քանակին համապատասխան, համատիրությունների կամ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից չկառավարվող, բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու, հանգստի և հասարակական այլ վայրերի (համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների) խնամքը և

պահպանությունը իրականացնելու, համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային անվտանգ երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման աշխատանքներ իրականացնելու, համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունը իրականացնելու, համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների, բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումն իրականացնելու, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինական, կառուցապատման, կոմունալ տնտեսությա այլ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնելու նպատակով, հիմնադրել նոր իրավաբանական անձ հանդիսացող «Օձունի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Հաստատել կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն Հավելվածի 1-ի:

3. Գործունեությունն իրականացնելու նպատակով՝ կազմակերպության հիմնադրման հետ միաժամանակ, կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել (ամրացնել) գույք՝ համաձայն Հավելվածի 2-ի:

4. Կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարելու նպատակով կազմակերպության ղեկավարի (տնօրենի) պաշտոնում քաղաքացի Համլետ Անուշավանի Դավթյանին նշանակելու համար տալ համաձայնություն:

5. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել կազմակերպության կանոնադրության պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթները և ձևակերպումները:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (8) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., նոյեմբերի 7
Գ. Օձուն

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 7-ի N 50-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՕՁՈՒՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի «Օձունի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 7-ի ««ՕՁՈՒՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» N 41-Ա որոշման համաձայն:

Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Օձուն համայնքի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ Հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Օձուն համայնքի ղեկավարը, որի ենթակայությանն է հանձնվում Կազմակերպությունը:

1.4 Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող կողմ:

1.5 Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ մասնաճյուղ (մասնաճյուղեր) որը (որոնք) ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, խորհրդանիշ, ձևաթղթեր և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված անհատականացման այլ միջոցներ:

1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար, Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար.

1.10 Կազմակերպության անվանումն է՝ «Օձունի կոմունալ սպասարկում եվ բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

1.11 Կազմակերպության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գյուղ Օձուն, փողոց 6, շենք 10:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեության հիմնական առարկան Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրների լուծման նպատակով մատուցվող ծառայությունների իրականացումն է, համայնքի բարեկարգումը և կոմունալ սպասարկումը:

2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) աղբահանություն և սանիտարական մաքրում (սանիտարական մաքրման կայանքների շինարարություն և շահագործում),

2) բարեկարգման, կանաչապատման աշխատանքներ, հանգստի և հասարակական այլ վայրերի (համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների) խնամք և պահպանություն,

3) համայնքային գերեզմանատների գործունեության և դրանց պահպանման աշխատանքներ,

4) ասֆալտապատման, փոսալցման և փոսային նորոգման աշխատանքներ,

5) համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային անվտանգ երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման, նորոգման և շահագործման աշխատանքներ,

6) համայնքի արտաքին լուսավորության համակարգի պահպանում, նորոգում և շահագործում,

7) համայնքի սեփականություն համարվող բնակելի և ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանման, նորոգման և շահագործման աշխատանքներ,

8) համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի, անձրևաջրատար ցանցերի, սելավատարների և այլ կառուցվածքների, պահպանում, նորոգում և շահագործում,

9) համայնքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքներ,

10) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով համատիրությունների հիմնադիր ժողովների և դրանց անցկացման աշխատանքների ինչպես նաև օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքերի կառավարման այլ մարմինների ձևավորման նախապատրաստական աշխատանքներ և համայնքի մասնակցությամբ այդ շենքերը սպասարկելու՝ համայնքի սեփականությունը համարվող բնակարանների քանակին համապատասխան, համատիրությունների կամ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից չկառավարվող, բազմաբնակարան շենքերի պահպանում,

11) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեություն,

12) համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների, բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինական, կառուցապատման, կոմունալ տնտեսությա այլ անհրաժեշտ աշխատանքներ,

13) թափառող կենդանիների ոչնչացման ծառայությունների իրականացում,

14) աբոնենտային վճարների գանձման կազմակերպում,

15) համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրների լուծման նպատակով մատուցվող այլ ծառայությունների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տնտեսական գործունեության իրականացում:

2.3 Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար (ոչ առևտրային կազմակերպությունը) իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

2.4 Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն Կազմակերպության ստացած լիցենզիայի և Հիմնադրի համապատասխան որոշման և հանձնարարականի հիման վրա:

2.5 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ

ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

2.6 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:
Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

2.7 Համայնքային կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

Կազմակերպության Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության հիմնադրումը.

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

դ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) Կազմակերպության կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանումը:

3.3 Լիազորված համայնքային մարմինը (Օձուն համայնքի ղեկավար)՝ իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Օձուն համայնքի ղեկավարը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) Կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ներկայացնում է Հիմնադրի հաստատմանը.

ե) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

է) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

ը) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

թ) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

ժ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Օձուն համայնքի ղեկավարը:

Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը՝ Օձուն համայնքի ղեկավարը.

գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն համապատասխան մասնագիտական կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

ե) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:

զ) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չեն կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Կազմակերպության տնօրենը՝

ա) օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրության, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

բ) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

դ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

ե) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր: Կազմակերպության կազմում հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ստեղծվելու դեպքում նշանակում և աշխատանքից ազատում է դրանց ղեկավարներին (տնօրեններին).

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

է) կատարում աշխատանքի բաշխում աշխատողների միջև,

ը) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ժ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմին,

ժա) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում ստեղծված (արտադրված) և ձեռք բերված գույքից.

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5 Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր գույքային և այլ իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Օձուն համայնքի ղեկավարի որոշմամբ:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշմամբ:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Կազմակերպության սեփականությունը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշմամբ:

4.7 Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

4.8 Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուր են հանդիսանում Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլգ որոնունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական

անձանց կամավոր ներդրումներն ու հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված կրթամշակութային և ուսումնական և այլ գործունեության նպատակով տրամադրված դրամաշնորհները:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը.

4.10 Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4.11 Կազմակերպության համար բյուջեով ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում Կազմակերպության կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձեւով: Կազմակերպության կողմից այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

4.12 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

4.13 Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը.

4.14 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրն ու Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը.

4.15 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.2 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

6.2 Կազմակերպության լուծարման դեպքում, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Օձուն համայնքի բյուջե:

6.3 Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

/ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2016 թվական, N 51-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱՐԾՐՈՒՆ ԴԱՎԹՅԱՆԻ, ԱՐՏԱՇԵՍ ՏԻՏԱՆՅԱՆԻ, ՌՈՄԻԿ ՃԱՐՈՅԱՆԻ ԵՎ ՎԱՉԵ ՉՈԲԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը, քաղաքացիներ Արծրուն Դավթյանի, Արտաշես Տիտանյանի, Ռոմիկ Ճարոյանի և Վաչե Չոբանյանի նկատմամբ սահմանել գույքահարկի գծով արտոնություններ հետևյալ չափերով.

1) Արծրուն Սարգսի Դավթյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 14, տուն 14, ՀՎՀՀ 13587845) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2016 թվականի գույքահարկի ապառքից՝ 32 500 (երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով.

2) Արտաշես Արարատի Տիտանյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 5, նրբանցք 1, տուն 2, ՀՎՀՀ S0250400) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի գույքահարկի 2015 թվականի ապառքից և տույժից՝ 5 646 (հինգ հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումարի չափով և 2016 թվականի գույքահարկի ապառքի մի մասից՝ 2 500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

3) Ռոմիկ Վարդանի Ճարոյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 5, տուն 22, ՀՎՀՀ 13670752) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2016 թվականի գույքահարկի ապառքից՝ 6 400 (վեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

4) Վաչե Սերյոժայի Չոբանյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 8, շենք 9, բնակարան 5, ՀՎՀՀ S0250064) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2016 թվականի գույքահարկի ապառքից՝ 9 000 (ինն հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (8) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., նոյեմբերի 7
Գ. Օձուն